

ՄԵՂՔԸ

ՀՐԱԺԱՐԻՄՔ ԶՂՋՈՒՄ

«Մեղայ Ամենասուրբ Երրորդութիւն»

ՄԵՂԱՅ

Այսինքն՝ եկեղեցի յաճախելով ու Ս. պատարագին մասնակցելով, աղօթելով. Աստուածաշունչ ու հոգեւոր գրականութիւն ընթերցելով, ողորմութեան գործեր կատարելով իսկ անձնական շահէ կամ եկամուտի համար կատարուող գործերէն առաւել եւս անառակութիւններէն, անպարկեշտ կերուխումէ ու զուարճանքներէ պէտք է խուսափի:

5) Պատուէ հայրդ ու մայրդ

Հրաժարելի պատուիրաններէն

6) Մի սպաններ

7) Մի չնար

8) Մի գողնար

9) Սուտ վկայութիւն մի ընէր

10) Ուրիշին ունեցուածքին աչք՝ մի դնէր:

Թ)2 - Օրէնքը մեղայի այս հատուածին մէջ քրիստոնէական կրօնքը կը նշանակէ, որ նոյնպէս, ինչպէս որեւէ կրօնք, ունի իր պարտադիր օրէնքներն ու կանոնները: Ասիկայ նոյնն է, ինչ որ քրիստոնէական հաւատքը (կարգը):

Ուստի օրէնքը առի բայց անոր մէջ ծուլացայ եւ քրիստոնէական հաւատքը ընդունեցի բայց գործերովս անարժան գտնուեցայ ըստ էութեան նոյն իմաստը կ'արտայայտէ որ միայն անունով եմ քրիստոնէայ եւ ոչ թէ գործերովս:...**Շարունակելի**

Աստուածասէ՞ր ես, թէ աստուածաբան

Այսօրուան աշխարհը արժէք կու տայ աստուածաբաններուն, բայց Աստուածաշունչը արժէք կու տայ աստուածասէրներուն: Մէկ աստուածասէր մը հազար հատ աստուածաբան կ'արժէ: Ի՞նչ օգուտ երբ մեր աստուածաբանութիւնը շիտակ է, բայց մեր յարաբերութիւնը Աստուծոյ հետ շիտակ ու լիրալիր չէ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Եթէ... հասնիմ ամբողջական գիտութեան... բայց սեր չունենամ, ոչինչ կ'արժեն» (Ա.Կր 13.2): Աստուծոյ համար կարեւորը մեր ուղեղին մեծ ըլլալը չէ, այլ՝ մեր սրտին մեծ ըլլալը: Աստուծոյ հետ անցուած աղօթքի ջերմ պահ մը անհուսօրէն աւելի կ'արժէ քան մեր ամբողջ կեանքի ընթացքին մեր մատուցած աստուածաբանական դասախօսութիւնները:

Միեւնի ընթերցող, **ՃՐԱԳ** թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak, Կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸԱՔԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak ճրագu թերթ](#)



ՃՐԱԳ

ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՍ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ս. 119-105)

Թ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 10 ԱՊՐԻԼ, 2016

ԹԻԻ 15

ԺԵ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ (ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ)

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծք. 9.23-31: Ա. 2.1-10:

ՅԻՍՈՒՍ ԶՐԻԱՏՈՍԻ ԱԻՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 2.23-3.12:

Զատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր ռեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի որ ինք գիտէր՝ թէ ի՞նչ կայ այդ մարդուն սիրտին մէջ:

Նիկողէմնոս անունով փարիսեցի մարդ մը կար, որ հրեայ իշխան մըն էր: Գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ ըսաւ անոր. «Վարդապետ, գիտեմք, որ դուն Աստուծոյ կողմէ ղրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ՝ եթէ Աստուած անոր հետ չըլլայ»:

Յիսուս պատասխանեց անոր. «Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»:

Նիկողէմնոս հարցուց անոր. «Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն ծնիլ: Կարելի բա՞ն է, որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»:

Յիսուս պատասխանեց. «Վստահ եղի՛ր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է կրկին ծնիք: Հովը ուր որ ուզէ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին»:

Նիկողէմնոս հարցուց. «Ինչպէ՞ս կը պատահի ատիկա»:

Յիսուս պատասխանեց. «Դուն, որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր: Վստահ եղի՛ր, թէ ինչ որ գիտեմք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԱՇԽԱՐՀԱՍՏԱՐԱՆ ԿԱՍԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ

Աշխարհամատուռ կը նշանակէ երեւելի մատուռ կամ եկեղեցի: Բառը կազմուած է աշխարհ եւ մատուռ բառերէն: Աշխարհամատուռ, նաեւ կը նշանակէ աշխարհի առաջին մատուռը: Չատկուան տօնին յաջորդող երկրորդ Կիրակին եկեղեցական տօներու շարքին, կը յիշատակուի նաեւ Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի տօնը: Աշխարհամատուռը, մեզի կը յիշեցնէ Քրիստոնէութեան առաջին մատուռը, որ հիմնուեցաւ վերնատան կից, առաքելներու կողմէ:

Առաքելները՝ Յիսուսի կարգադրութեան համաձայն, Իր համբարձումէն յետոյ, կը հաւաքուէին վերնատուն՝ Սիոնի բարձունքին, կը յիշէին իրենց վարդապետը եւ կը կատարէին վերջին ընթրիքի ժամանակ Անոր տուած պատգամը: Կ'օրհնէին հացն ու գինին, միասին կ'աղօթէին եւ միասնաբար կը ճաշէին: Հաւաքական կեանք կ'ապրէին: Աշակերտներուն հաւաքոյթներու առաջին աղօթավայրը կոչուեցաւ աշխարհի առաջին եկեղեցին, աշխարհամատուռ եւ անոր յիշատակին եկեղեցոյ մէջ նշանակուեցաւ տօնական օր մը:

Աշխարհամատրան տօնը կրօնական եւ եկեղեցական տեսակէտէն մեծ նշանակութիւն կը ներկայացնէ: Ան Քրիստոսի հաստատած Իտէալ եկեղեցին էր, եւ այս օրերու քրիստոնէայ աշխարհի, մանաւանդ եկեղեցոյ կրօնապետներու երազած իտէալ եկեղեցին է, ուր բոլոր քրիստոնէաները կրնան միասնաբար աղօթել, հաղորդուիլ եւ գործել:

Աշխարհամատրան Կիրակին կը կոչուի նաեւ՝ Կանաչ Կիրակի: Կանաչ կոչումի ճշգրիտ իմաստը ծանօթ չէ մեզի:

Ոմանք այլաբանական իմաստ կը տեսնեն, որպէս նմանութիւն բնութեան եւ առաջին եկեղեցոյ միջեւ: Կանաչ Կիրակին կը նմանցնեն բնութեան մէջ ծաղկող, ծլարձակող եւ աճող կեանքին, որ կենդանութիւն ու թարմութիւն կու տայ աշխարհին եւ մարդկութեան: Աշխարհամատուռն ալ, որպէս Քրիստոսի ցանած սերմի առաջին կանաչ ծիլը, աճեցաւ, ծլարձակեց, բազմացաւ եւ դարձաւ աշխարհի վրայ տարածուած եկեղեցին:

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Ամբողջ սրտով գոհութիւն պիտի մատուցանեմ քեզի, Տէ՛ր եւ քու բոլոր սքանչելի գործերդ պիտի թուեմ: Քեզմով պիտի ուրախանամ ու ցնծամ, եւ ներբողեմ քու անունդ, ո՛վ Բարձրեալ: Թշնամիներս նահանջի ճամբան բռնեցին, քու դիմացդ տապալեցան ու կորուստի մատնուեցան, որովհետեւ դուն, ո՛վ արդար Դատաւոր, քու գահիդ բազմած՝ իմ դատս եւ իրաւունքս պաշտպանեցիր: Հեթանոսները յանդիմանեցիր, ամբարիշտը կորուստի մատնեցիր, եւ անոնց անունը յաւետ ջնջեցիր: Թշնամիս ընդմիշտ խորտակեցաւ, անոնց փաղաքները հիմնաշատակ կործանեցիր, եւ անոնց յիշատակն անգամ կորսուեցաւ: Բայց Տէրը կայ ու կը մնայ յաւիտեան: Ան իր աթոռը նստաւ եւ պատրաստ է դատաստանին: Արդարութեամբ պիտի դատէ աշխարհը ուղիղ դատաստան պիտի ընէ ժողովուրդներուն: Տէրը ինձ ապաւէն պիտի ըլլայ անիրաւուածին, ապաստան պիտի ըլլայ նեղութեան ժամանակներուն: Անոնք որ քեզ կը ճանչնան, ո՛վ Տէր, քեզի պիտի վստահին, որովհետեւ դուն չես լքեր անոնց որոնք քեզի կը դիմեն:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Համբերութեան Պսակը

Արդ, ինչո՞ւ չար բաները յիշելով կատաղածի նման կը վնասես եւ կը գրկես քեզ արքայութենէն, որուն հասնելու համար պէտք էր ամէ՛ն հնար գործադրէինք: Անցաւոր այս կեանքը եթէ այսքան ցանկալի է, ինչ խօսք հապա այն կեանքի մասին ուր ո՛չ ցաւ կայ ո՛չ տրտմութիւն:

Երանի՛, եւ երի՛ցս երանի անոնց, որոնք անոր կը հասնին: Նոյնպէս, չկայ աւելի թշուառական բիրապատիկ խղճալի, քան անոնք, որոնք կը գրկուին անկէ: Հետեւաբար, որպէսզի արքայութիւնը ժառանգենք եւ ո՛չ թէ գեհեմը, ամէն բարիք գործենք. նախ՝ մեր ընկերոջ ներելով, ապա խոստովանութեամբ, աղօթքով եւ ողորմութեամբ ջանանք մեր անձերը սրբել մեղքերէ, որպէսզի Պօղոսի խրատին համաձայն՝ բարի գործերով կատարեալ ըլլանք:

Ան որ մասամբ առաքինի կեանք կը վարէ, այնպիսին կատարեալ չըլլար: Ի՞նչ կը շահի մէկը յաճախակի աղօթքներէ, երբ առատ կերպով ողորմութիւն չի տար, կամ կուտայ՝ մարդոց երեսալու համար, եւ կամ Աստուծոյ կամքին համաձայն ողորմութիւն կուտայ եւ անով կը հպարտանայ, կամ թէ խոնարհութիւն ցոյց կուտայ եւ պահք կը պահէ, սակայն ընչասէր կ'ըլլայ, ի՛նչ որ Քրիստոսի ծառայութենէ կը հեռացնէ մեզ, ինչպէս Տէրը կ'ըսէ. Չէք կրնար Աստուծոյ եւ ինչքերու ծառայել, (Հմմտ. Մատթ. 24), Քրիստոս կ'ըսէ. կարօտեալին տուր, իսկ ան՝ աղքատներէն խլէ: Քրիստոս կ'ըսէ. պէտք է ներել մեղաւորներուն, իսկ ան՝ պէտք է վնասել անմեղներուն: Քրիստոս կ'ըսէ ողորմած եղիր իսկ ան՝ անողորմ եղիր:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ ՍԱՂՄՈՍ 3

Սաղմոս, Դաւիթի ժողովածէն: Երբ իր որդիէն՝ Արիստոմէն կը փախչէր:

Տէ՛ր, ի՛նչքան շատ են զիս նեղողները, ի՛նչքան շատ են զիս նեղողները, ի՛նչքան շատ են ինձի դէմ ելլողները:

Շատերը ինձի համար կ'ըսեն. «Անկարելի է, որ Աստուած զինք փրկէ»:

Բայց դուն ո՛վ Տէ՛ր, Դո՛ւն ես պաշտպան վահանս,

դո՛ւն ես փառքս, գլուխս բարձր պահողը:

Ամբողջ ձայնով ՏԻՐՈՋ աղաղակեցի, եւ իր սուրբ լեռնէն պատասխան տուաւ ինձի:

Ես կը պառկիմ կը քնանամ, վստահ՝ որ զիչերն ամբողջ Տէ՛րԸ զիս կը պահպանէ: Ուստի բնա՛ւ չեմ վախճար բիւրաւոր այն մարդոցմէ, որոնք ամէն կողմէ զիս կը պաշարեն:

Ե՛ւ, ո՛վ Տէ՛ր, փրկէ զիս, ո՛վ իմ Աստուածս, ապտակ մը տուր թշնամիներուս, փշրէ՛ ամբարիշտներուն ակռաները:

Փրկուիմը դո՛ւն կուտաս, Տէ՛ր, թող օրհնուիմը ժողովուրդիդ վրայ ըլլայ:

ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ

Տէ՛ր մի՛ դատեր եւ մի՛ դատապարտեր զիս ըստ իմ անբաւ զազիր գործերուս եւ մի՛ կարգեր անոնց հետ, որոնք զայրացուցին քեզ, այլ փառաւորէ՛ փառաւորեալներուն հետ պսակէ՛ պսակեալներուն հետ եւ ուրախացո՛ւր բերկրեալներուն հետ:

(Եփրեմ Ասորի)